



Պատասխանատու  
Յովհաննէս Փիլիսեան

# ՕՐԱԳԻՐ ՉՄԻՒՌՆԻՈՅ

Նամակըն ուղղելի են  
առ. Ղ. Գ. Պաղազարեան

## ՔԱՂԱՒԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՊԱՌԱՍՏԵՐՈՐԳ ԱՌԱՋՆԵՐՈՐԳ ՏԱՐԻ

ՉՄԻՒՌՆԻԱ ՇԱՐԱԹ 27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1880

ԹԻՒ 1154

### ԲԱՂԱՒԱԿԱՆ

ԱՆԳՂԻԱ : Արդէն 20 օր է որ խորհրդարանը վեհապետական ճանով փակուեցան . սակայն ժողովրդային շարժումներն նկատելով խորհրդարանին վերաբացումը փութայնելու հարկ կը տեսնուի : Ըստ նոր անումարի Հոկտե. 1 թուով հեռագրալուրք կրճանուցանեն ինչ ինչ խմբակներու գոյութիւնը , և անոնց խորհրդակցութեանց առարկայքն : Միեւնոյն թուականով Լոնտոնի մէջ խմբուած միութիւնի մը մտադիր է նախարարութեան Արևելեան խնդրոյ մասին բռնած աշխարհավարութեան դէմ բողոքել : Իսկ իրլանտիոյ մէջ ժողովրդային յուզմունք մինչև որ աստիճան սաստկացած են , լրագրութեանց երկար յօդուածներէ իմանալու հարկ չէ թողուր հետեւեալ ցաւալի դէպքն : Մի քանի անձինք , անտարակոյս գաղտնի ընկերութեան մի արբանեակ եղող կրօնամոլներ , կալուէի մէջ յանակնկալ յարձակելով յորա Մուսնմարի վրայ անգլիաբար խողովոցներն զինքը :

Իրաց այս վեճակին վրայ բաւական բացատրութիւն կրնայ համարուիլ Մեծօրէի Տէրութեան լրագրին ըրած տեսութիւնքն , յորմէ կը համարուտեմք հետեւեալ քաղուածք .— Անգղիոյ առաջին նախարար Պ. Կլէտտըն , արդէն 4 ամիս կ'ընէ որ գործողութեանց գլուխը կը պահուի , և ուրու հասաւ ստուգապէս արտաքոյ կարգի կերպիւ մը : Նախորդ առաջին նախարար լորտ Պիքնոնի վրայ աշխարհավարութիւնն , որ ժողովրդականութեան մեծ համբաւ ունէր , և որ յանդուրդեցաւ համայն եւրոպական մեծ տէրութիւններն միարանել Պէրլինի դաշնագրին միջոցաւ , ժողովրդային կարծեաց առջև յանկարծ նսեմացաւ (անշուշտ աղատականաց քննադատական ճառերու և փայլուն խոստումներու և յուսադրութեանց չնորհիւ) , և ընտրական մրցումէ մը զինի Պ. Կլէտտըն յայտնական արտաբար , թէ և ալ եւրոպական երկուստարգական դարձուցութիւնն և իւր սեպհական տաղանդն եղող գրաւիչ պերճախօսութիւն մի ծառայելով իւր ընդարձակ շրջապատին մէջ : Սոյն չքնադ գործունէութեան առջև Պահպանողականաց ամեն

զօրութիւն , ամեն փառք և ամեն իշխանութիւն յանկարծազատ սաստիկ մորկէ մի քշուած ամ պերու պէս ցրուեցան տեղի տալով բազմաթիւ և յաղթական Աղատականաց : Միայն Անգղիոյ համար հասարակաց խորհրդարանին մէջ 120 ձայներու մօտ առաւելութիւն ունէին , այլովքն հանդերձ 180 ձայնով յաղթանակեցին : Սոյն անբաւ առաւելութիւնն նորակազմ նախարարութեան մեծամեծ միջոցներ կը նծայէր ներքին կառավարութեան համար , և բարձր դիրք մի արտաքին աշխարհավարութեան համար : Նորակազմ նախարարութիւնն բացարձակ տէր եղած էր ըստ ամենայնի , ոչ ոք կրնար տարակուսիլ թէ նա երկար և փայլուն ասպարէշ պիտի ունենայ : Չորս ամսուան մէջ այս կացութիւնն զարմանալի կերպիւ փոփոխութիւն կրեց և չափաւորեցաւ :

Պ. Կլէտտընի նախարարութիւնն ներքին գործոց մէջ երկու ահագին խնդիրներ հանեց , մին իրլանտական խնդիրն , միւսն ինդիոյ օրինաւորութեան սկզբունքի , որոյ վրայ հաստատուած է այժմ լորտերու խորհրդարանն : Իրլանտիոյ խնդիրն իւր ընկերական երևութիւնն որ և իցէ կառավարութեան մը հաստատ մնալուն վտանգաւոր հանգամանք մի ունէր . իսկ օրինաւորութեան սկզբունքի խնդիրն Բրիտանական Սահմանադրութեան դէմ էր զոր ամեն Անգլիացի սովոր է յորդել , վստահի երեսփոխանական կազմակերպութեան հիմանց կը դառնար :

Արտաքին աշխարհավարութեան տեսակէտով իսկ արդի նախարարութիւնն արժանեց զերծ չէ : Իւր պաշտօնավարութեան սկիզբն փայլուն յաղթանակ մի տարաւ Արևելեան խնդրոյ վրայ եւրոպական տէրութեանց համաձայնութիւնն դիմացնելով : Բայց սոյն արդիւնքն ոչ միայն Բրիտանիա Մեծին Բրիտանիոյ հետ ունեցած բարեկամական գործարքը դրութիւնն զոհեցով , և նոյն իսկ Պէրլինի դաշնագրութեան (որուն դէմ Բ. Գուռն լրտ Պիքնոնի վրայ օրէն սկսեալ անդադար բողոքած է) օգնութեան կարօտելով կարելի եղած է ձեռք բերուիլ , այլ նոյն իսկ սոյն համաձայնութիւնն մինչև ցարդ ոչինչ պըտուղ յառաջ բերած է :

Իրաւ է որ հակառակ այն համոզման և ակնկալութեան զոր Պ. Կլէտտըն ունէր , և զոր տէրութեանց հաղորդած էր , Բ. Գուռն եւրոպիոյ հաւաքական ծանուցագիրներու առջև չփութաց զնշանիլ , ստիպեալ թէ իր առջև եղող ստուգիւ անյաղթելի դժուարութիւններէ , և թէ աւելի յուսով որ եւրոպական դահլիճներու յորինած կապակցութեան մէջ խզում մի կրնայ պատճառել յոգնեցնելով զիրենք յամեցուցիչ արարքներով . ուստի և գործը ժամանակաւորելով յետագայ այնքան յաջողակութեամբ որ եռամեայ բանակցութիւններէ զինի այսօր զրեթէ գործոյն սկիզբն ենք տակաւին :

Մօնթէնէկոյի խնդիրն , իրաւ է որ կարգադրուելու մօտ է տէրութեանց համբերութեան և հաստատափառ պնդման շնորհիւ . իսկ հելլենական խնդիրն տակաւին քայլ մի առած չէ , և միւսէն աւելի ծանր և դժուարին է Բ. Գուռն որ Տուրինեօն տալու համար այոջափ երկար վարանեցաւ , ինչպէս կրնայ դիւրութեամբ յանձնել երկու դաւառներ , որ իրեն համար Տուրինեօյէն անսահմանաբար առաւել կարևորութիւն ունեցող երկիրներ են :

Ասանք դիւրապօրծագրելի իրողութիւններ չեն , եւրոպական համաձայնութեան մէջ խզում պատճառող դէպքի մը պատահումն իսկ անհաւանական բան չէ : Արդէն յայտնի են պատճառներն : Սուլթանը իւր խորհրդական նախարարները կրփոխէ երբ ասանք ստուգիւ զիջումի որոշում տալու տրամադրութիւն կը ցուցնէին : Ալպանացիք և Մօնթէնէկոյիք իրարու դէմ կանխածուր դրութեան մէջ կը պահուին : Աւստրիա իրեն դաշնակիցներ կրփարէ : Վերջապէս Պէրլինի զարհուրելի Մարդը ստուերն մէջ կը շարժի և ոչ ոք կարող է հասկընալ թէ ինչ կ'ուզէ նա կամ ինչ չուզէր : Այս դրութեան մէջ Թուսիա թող բարեհաճի իւր երկար ժամանակեայ մնուցած խորհուրդներն կատաղաբար իրացնելու հետամուտ լինել , որով կարելի է որ եւրոպա ինքզինքը ընդհանրական հրդեհի մը մէջ մղուած գտնէ :

Քաջայոյս եմք որ իրերը մինչև այս կէտը չեն հասնիր : Տէրութիւնք իրենց հեռատեսութիւնք

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### ԱՐԲԵՑՈՒԹԻՒՆ

- Արբեցութիւն ամենալատ
- Զինչ գործէ զմարդ կան արմատ :
- Միանգամայն առնէ զգայն
- Եւ ատելի յազգաց համայն :
- Բիւրոտեսակ և յոգնազան
- Կերպիւ անիլէ որդւոց մարդ կան :
- Առնէ այն տխուր զսիրտին ինքնան
- Ողորմելի թշուառական :
- Ոմանք անկեալ կան ի կրպակ
- Մոռանալով զերեսանց զյարգ :
- Անդ զոր ի բուն մնան գատարկ
- Յորում վտանհն հօրն զվատակ :
- Ընդ երեկոյս զիմեն ի սուն
- Որպէս զգայլ և անասուն ,
- Թմբեայք ի քուն որպէս քանգամ :
- Չուրկ յաղթից առաւօտան :
- Ոմանք այնքան լինին տիրեալ
- Մինչ ի բազմաց ասին մեռեալ ,
- Ոմանք այնչափ լինին արբեալ
- Մինչ ի խօսից լինին զրկեալ :
- Ոմանք արբեալ տան զլիջոց

- Բերանք նոցա դուրք դժոխոց ,
- Եւ զայս առնեն յուտելն զհաց
- Ժանտահոտեալ շրթամբք իւրեանց :
- Այլև ոմանք ի սեղանին
- Գրաւս արկեալ զհոյ ի զմարմին :
- Մերթ որպէս շուն փոխեալք լինին
- Եւ զայն ի մէջ բազմականին :
- Աչքատն արբեալ ճոխ զինք կարծէ
- Որպէս զանիւծ յոյժ իւր պարծէ ,
- Ունիմ անէ այնչափ ազգաց
- Ոսկի արծաթ անիւ սկսեց :
- Ազահն արբեալ առատանայ
- Եւ զմեծամեծս խոստանայ ,
- Մինչ սկսանի տալ մոռանայ
- Եւ զխոստացեալն ուրանայ :
- Այլ ոմն արբեալ զինքն գովէ
- Ոմն զմնուր իւր նղովէ ,
- Իսկ ոմն արբեալ իսկոյն լռէ
- Ոմն անպատշաճ բան ճառէ :
- Տուր ինձ զհոգի զգաստութեան
- Սէր հանձնարոյ և գիտութեան ,
- Ոչ հետեւել չապրութեան
- Եւ զարշելի արբեցութեան :

#### ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՕՍԻՔԵՐ

Երբ չքաւորութիւնը տան մի դուռն են երս մտնէ , պատին , յարգանքն ու բարեկամութի շատ անգամ պատուհաններէն դուրս կ'փախչին : Ամենէն թշուառ և տխուր այն մարդուն վիճակն է , որ իւր կեանքէն ձանձրացած և մահուանէ կը սուսկայ :

Ո՞րչափ գէշ կը վարձատրէ աշխարհ ամենայն հաւատարմութեամբ իրեն ծառայողներն : Ունայն յոյսերով ժամանակ մի կը փայտայէ զանոնք , կ'սպառի երիտասարդութիւնն սպասելով նորա խոստմանց արդիւնքն վայելելու . նորա խոստումներն անսպաւ են , բայց ոչ ոք արդիւնքըն վայելած է , այլ աշխարհի ծառայողներն իրենց յարատեւութեան իրեն վարձք ուրիշ բան չեն ընդունիր բայց միայն կնտած գլուխ , շիջեալ աչքեր , թօշնած ճակատ , գողոճուն ձեռքեր , կիծոտ ծունկեր , կործանուած ստամոքս , բաբախող ու մաղձոտ տխուր վարանմունքով յուզուած սիրտ , հիւանդութեամբք տաժանեալ մարմին , վերջապէս անբաւ խայթերով խոչսանգուած խիղճ : Երանի , և բիւր երանի անոնց , որք թէ և անպանձ պատասխանով անկեղծ և շերտաքին ճիգ կը թափեն իրենց անմահ հոգին այն նաւարեկութեան փրկելու կենդանի և լուրջ զղջմամբ :

Ղ. Յ. Մ.

կարող են զգուշանալ որ Պետրոսի դաշնագիրն դործադրել տարու մասին չեղձանեն այն դաշնագրութիւնն անհետապահ և յամառ ձեռնարկութիւնն րով, որ է Եւրոպայի խաղաղութիւնն, որոյ պահպանութիւնն իրենց իսկ անկեղծ փառքն է :

Բայց հարկ էր Անդրիոյ արդի նախարարութեան բռնած աշխարհավարութեան հաւանական վտանգներն ցուցանել, որոյ եթէ մէկ ստոյգ և անուրանալի դործը կայ՝ այն ալ ուրիշ բան չէ բայց եթէ Աստրիան Գերմանիային մտեցնելն ու իտալիան այս երկու տէրութիւններէն ցլերջին հեռակէտ անշատելն է : Այս իրաւ է որ նա ինքիւնքը բացաւ, որոյ և ոչմին լուծեց :

ԳԱՂՂԻԱ : Հրաժարեալ նախարարաց տեղ եղած նոր ընտրութիւնք մեծ համակրութեամբ կ'ընդունուին ժողովրդեան կողմէ : Գաղղիոյ օրագրութեանց չատերու այս մասին հրատարակած երկար յօդուածներն կը հաստատեն զայն : Իրենց հրաժարականներն ետ առնող նախարարներէ զատ Պ. Ֆրէսինէի, Պ. Վարուայի և Պ. Ժորէկիպէրի տեղուրիներն ընտրուեցան որք են, Պ. Ժիւլ Ֆէրի, նախագահ խորհրդոյ նախարարաց, և հասարակաց կրթութեան նախարար, Պ. Պարթէլըմի Սէնթ—Իլէր, արտաքին գործոց, Պ. Սատի Գարնօ, հանրօգուտ շինութեանց, Պ. Ժովապետ Գլուէ, ժովային զինուորութեան, Գաղղիոյ Գերմանիան իբրեւրէ :

Գերմանական լրագիրներն կը ծանուցանեն թէ Պիզմարք իշխանն Առեւտրական գործոց նախարար անուանուեր է : Անշուշտ սոյն ընտրութիւնն Գերմանիոյ վաճառականաց մեծապէս օգտակար է : Պիզմարք իշխանն մտադիր է եղեր Գերմանիոյ առեւտրական գործառնութեանց մէջ մի քանի կարևոր բարենորոգումներ ընել :

—Նախընտր Յայն—նի լրագիրն իւր թղթակցէն առնելով կը ծանուցանէ թէ՛ նախարարաց Բ. Դուռը ի խորհուրդ գումարուած միջոցին Ռուսական գետնային Պ. Նովիքով Բ. Դուռը երթալով փափագ յայտներ է վեմա—Ապէտին բաշային հետ անսակցելու : Նորին վսեմութիւնն առանձին սենեակ մի հրաւիրուելով երկու ժամ մի չափ տեսակցութիւն ունեցեր է : Յիշեալ լրագրի թղթակցին կը թաւելու թէ՛ սոյն տեսակցութիւնն միայն Մոնթէնէկրոյի ինքրոյն համար կարծելը ճիշդ չէ, այլ անտարակոյս Հայոց ինքրին և սոյն տեսակցութեան մէջ մեծ նիւթ եղած է : որովհետև սոյն ինքրին հելլե-

նական ինքրինքն առելի կարևորութեան կերպարանք առած է և կ'երեւի թէ սոյն ինքրոյն գործադրութիւնն պիտի յառաջէ քան զհելլենականն :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԹՅՈՒՆ

Մոնթէնէկրոյի ինքրոյն համար տէրութեանց համիմաստ ծանուցադրին ի պատասխան Բ. Դուռն ամսոյս 11ին շրջաբերական մի զրկեց առ դեսպանս, որուն մէջ ծանուցուած է թէ Տուրինուտոն Մոնթէնէկրոյի կը յանձնուի այն պայմանաւ որ նաւային ցոյցը չգործադրուի ոչ Մոնթէնէկրոյի, ոչ Յունաստանի սահմանագիծերու և ոչ Ասիոյ բարենորոգմանց ինքրիններուն համար, և Տուրինուտոն ի պատասխան կարուածքն ապահովին, և ոչ միայն Տիւնուի և Կրօտէի մասին կրկին պահանջում չըլլայ, այլ Մոնթէնէկրոյի համար այսուհետև որեւիցէ տեղ չուզուելու հաստատագիր տրուի ընդհակառակն եթէ նաւային ցոյցն գործադրուի, տէրութիւնք պատասխանատու մնան : Սոյն շրջաբերականին դեսպանք ամսոյս 15ին պատասխաներ են համիմաստ ծանուցադրով մի, որուն իմաստն է եղեր թէ՛ յիշեալ պայմաններն չեն ընդունիր, և նաւային ցոյցը կ'սկսի պաշտօնապէս :

—Հայկական ինքրոյն վերաբերեալ տէրութեանց երկրորդ համիմաստ ծանուցադրին Գերմանական գետնային տեսակցութեան միջոցաւ արտաքին գործոց նախարարին յանձնուեցաւ, որոյ պիտաւոր իմաստքն են :

Բ. Դրան ձեռք առած միջոցներն, մասնաւորապէս և այն կողմերը յատուկ պաշտօնակալներ զրկուելը Հայաստանի մէջ ճշմարիտ բարենորոգումներ մտցնելու արգիւնքն չունեցան, Բ. Դրան յայտարարութիւնն որով կը ծանուցանէ թէ բարենորոգումներն Ասիոյ միւս գաւառներուն մէջ և սպիտի տարածուին չէ կարող Պետրոսի դաշնագրին 61րդ յօդուածին պահանջումը գոհացնել, որ մասնաւորապէս Հայոց վիճակի բարւոքման կը նկատէ : միանգամայն երկու որոշ տնօրէնութիւններ կը պարունակէ, որոց մին է՝ քրիստոնէից վրայ հզօր պաշտպանութիւն քրիստոնէի հարստահարութեանց դէմ : երկրորդն է՝ երկրին բարորութեան աղբիւրներն ընդարձակելու յարմար բարենորոգմանց գործադրութիւն : Բարենորոգմանց հիմնական սկզբունքն պէտք է լինել երկու ինչ, մին՝ օրինաց առջև հաւատարմութիւն առանց խտրութեազգի և կրօնի : երկրորդն է՝ ապակեզրոնա-

ցում մատակարարութեանց : Հղօրապէս կաղմաւորեալ ոստիկանութեան մի հնորհու քիւրտեր : ծայրայեղ լծեանց առաջին 'րնայ առնալ Լիբիլին սուտեստն մատակարարութիւնն արգեամբ կը բարւոքի պաշտօնակալայ մնայութիւնն, և իրենց ամսաթուղթաց կանոնաւոր վճարմունքն երաշխաւորելով, դատական լաւագոյն ատեաններ կաղմելով, հասարակային ինքրոց մասին այլևայլ ժողովուրդներէն յարմարագոյն անձինք պաշտօնէութեան հարորդակից ընելով : Ընդհանուր կառավարիչներն պէտք են ընտրուիլ մի քանի տարիներու համար : Թէ՛ Բ. Դրան տէրութեանց առաջին համիմաստ ծանուցադրին տուած պատասխանայիւրն բարենորոգմանց գործադրութեան մասին դոհացուցիչ միջոց մի չյայտներ : Գանձային բարենորոգմանց մասին Բ. Դրան տուած յայտագիրն բարձրովն տեսական է, և գործնական հրահանգ մի չպարունակեր :

Ապէտին բաշայի տուած վիճակագրական տեսակցութիւնն, թէ՛ բոլոր բնակչաց թուոյն մէջ Հայոց թիւը հարիւրին տասնեւեօթներորդն է, չընդունուի, որովհետև տէրութեանց ուրիշ տեղերէ ժողոված տեղեկութեանց հետ համաձայն չէ : Կ'առաջարկուի որ Բ. Դուռն նոր մարգահամարի ձեռնարկէ, և սակայն սոյն դրապարտ պէտք չէ յետաձգել տալ բարենորոգմանց գործադրութիւնն, որք մարգահամարի ինքրոյն հետ յարաբերութիւն չունին, ինչպէս նորոգ պայմաններու վրայ հիմնեալ ոստիկանութեանց և դատական ատեաններու հաստատութիւնն, իրենց շնորհուրու երաշխաւորութեանց նոր սկզբունքներու վրայ ընդհանուր կառավարաց և ուրիշ պաշտօնակալաց անուանումը :

Բարենորոգմանց արդիւնաւոր ինքնուրն պայմաններն համառօտիւ բովանդակելէ զկի՛ ծանուցադրին կը յիշեցնէ թէ՛ 61րդ յօդուածն կը տարամարտէ նաև որ տէրութիւնք իրաւունք ունին հսկելու սոյն անօրէնութեանց գործադրութեան վրայ :

ԱԶԳԱՅԻՆ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Արդէն ազգային լրագրութեանց էջերն աւետեցին նախկին երկոյ այն է՝ Արարատեան Դպրոցաւորաց—Արեւելեան և կիլիկեան ընկերութեանց միացումը : Արդէն ազգերն և ան-

ՊՍԱԿ ՀԱՄԱԵՐՈՒԹԵԱՆ

(Տես լրագրոյս 14514152 քիւերք :

Արդ ոսկեփայլ ու փրոսկրեայ մեծ ու շքեղ կառքի մը վրայ Նստաւիառօք պերճ Գարուհին ամենքն անոր կընայէին, Ելաւ իշխանն ալ բազմեցաւ իւր հարսին քով փառօք մեծաւ : Պատերազմէ մի յաղթական դարձած ատեն և ոչ այսքան կը փրկանայր նա պանծալով, որչափ այժմիկ սիրուհոյն քով : Արքայակիր կառքէն ետև նախարարաց դաս միաձև Ազնուականք ալ անոնց հետ կարգաւ կ'առնուն քայլ միահետ : Գաղաքացի ամենեքին բոլոր գաշտերն ծածկեր էին, Եւ տկնապիշ կ'սպասէին տեսնել նոր հարսն ընդ իշխանին : Եկաւ հասաւ կառքն արքունի, երկու խումբն ալ հսն կը լսուին : Շատ դժուարաւ տեղ կը բացուի որ անխնեք հողովի : Ուրախայից ժողովուրդին ստէպ ստէպ հանած ձայնին կրկնումներէն ձիերն յուղուած՝ դափը հատանեն անդ սիգապանձ : Եւ վերջապէս ամենեքեան կուգան տաճարն նուիրական Ուր թագաւորն ու հովուհին հանդիսաւոր սուրբ խոստումին Յաւերժական այն շղթայով կը միանան բոլոր կեանքով : Ու կը պառնան դէպ արքունիք, ուր հաճութիւնք բիրապատակ, խաղ, արշաւանք, պարահանդէս կը ծաւալեն առատապէս Կեծ ջնձութիւն զըւարճալից ի վայելումն ամենից :

ԺԳ.

Շնորհաւորութիւն

Հետևեալ օրն մէկիկ մէկիկ կուգան գետնայինք, աւաղանիք Մեծ տէրութեանց կողմէ ուղերձ մատուցանել սիրով հանդերձ : Շնորհաւորել նորապսակ հարսն ու փեսան գերահաշակ : Վեհ տիկիներն այն պալատին շրջապատեն ըզրարուհին, Որ թագադրուն տիկնոջ մի պէս անոնց առջև արքայապէս

իմաստներով շքեղաբար կ'առնէ, կուտայ պատասխանի : Բոլոր մեծերն ու մեծահիք հիանալով կը տեսնեն : Վերկինք Անգիւտ շնորհօք զարդարած է մեր թագուհին, յաւերժ կեցցէ : Իւր եռանդուն մտքն աշխոյժ քաղաքակիրթ տիկնայց անոյշ Ազնիւ ձևերն անմիջապէս սեփականեց ընտրութեան պէս : Իւր պալատին մէջ գտնուած պաշտօնաւոր աղնիւ տիկնայց Պէսպէս ձըրիցն ամեն մէկու այնպէս եղաւ վերահասու, Որ դիւրութեամբ իւր հրամանին ներքև ամենքն ի միասին Կառավարել կը յաջողէր, ինչպէս երբեմն իւր իրաւունքներ :

ԺԵ. Երևան

Երկինք օրհնեց այս բարբաբատ ամուսնութեան պերճ աւաղան : Դեռ չէր գըլած տարւոյն շրջան, ծաղիկ տուաւ սերն Հիմնեան : Թէպէտ իշխան մի չէր անի, ինչպէս բազմաց էր բաղձալի, Բայց նորանին իշխանուհոյն անհաւասար գեղեցիկութիւն իրել մի նոր շնորհաց հրեշտակ կը ներշնչէր սէր անուշակ Ձինքը բոլոր տեսնողներուն, որոց և սիրտ գրաւեց իսկոյն : Հայրն հիացած բոտէպ կուգար ի տես մանկան, գոգուէր, գրգայր : Բայց ամենէ յոյժ առաւել մօր սերն արժան էր տեսանել : Աչքն անքրթիթ ի նա յառած՝ իմանգաղափաւ սիրար գըթած Անձնանուէր եղաւ մանկան իւր կաթ ջամբել մայրենական : «Ո՛հ ի՛նչ գաժան և ապաշնորհ պէտք է ըլլայ այն մայրը՝ որ իւր զաւակին ճիշ լըտելով չզգար սրտին մէջ սուրբ գորով : Կրնամ միթէ, բընութեան դէմ, այս զաւակիս, զոր կը սիրեմ, Կէս մայր ըլլալ միայն ծընունդ տալով զլնաւ անոր սընունդ : Ու մայրական իրնամբ համայն, օտար ձեռաց հաւատալով զայն : Այսպէս կ'ըսէր ու կաթողին զինք կը նծայէր իւր զաւակին : Ութ օր տեցաւ, մեծահանգէս աւագանին փառօք պէսպէս, Խմբուելով յապարանին, մկրտութեան կընիւր տուին իշխանուհոյն, որ վառվառէ անուանեցաւ յայնըմհետէ :

հասնելուն փորձերով համոզուած են թէ Միու-  
թեան մէջ է ազգի մը կորուսիւնը : Հայոց  
Միացեալ ընկերութեան Տնօրէն Ժողովն նպա-  
տակ դրած է Հայաստանի մէջ ուսումնական  
քիտութեան սո ը բառնալ, խաւարը հարածել,  
և մարդկութեան կենսական պիտոյքն  
մեր դարաւոր անուանիչ եղբայրներուն ոչմիայն  
հոգալ այլև ջանքել : Ինչպէս խնդրոյն կարևո-  
րութիւնն նոյնպէս և հարձոյն քաղաքակրթի գրծ-  
ուարութիւններն անժխտելի են : մանաւանդ  
արդեան ամենակերպ պարտաւորիչ առջև : Սա-  
կայն սոյն դժուարութեանց ուղղոյն սկիզբը կամ  
մէջ տեղը կանխ աննկատելի է : Ինչպէս մարդ-  
կութեան կամ հայրենեաց փրկանքի թոճի մի:  
Անշուշտ այն ալ աշակցի սոյն Միացեալ ընկերու-  
թեան ջանից ամեն Հայ որ մարդկային սուրբ  
զգացումն կրկնէ, ամեն մեծատուն Հայ որ իւր  
հսկութեան յարգն կը ճանաչէ, և ամեն ազգ-  
ային եկեղեցական որ իւր կենդանի եկեղեցին,  
կամ իւր բանաւոր հօտը կը խնդրէ : Ինչպէս որ  
ասոնց ամենուն նուիրական պարտքն է սիրել :

Կրմնայ մեզ արեւմտ քաղաքները Միացեալ ըն-  
կերութեան Տնօրէն Ժողովն, որ Հայաստանի  
զանազան գաւառներու մէջ ուսումնական  
հոգն արիւար ստանձնելով, տարեկան 5000  
լիբայի ծախուց պատասխանատուութիւնն ևս  
կատանձնէ, անխնայ շնորհալի իւր մեծ գործոյն  
ասպարիզին մէջ : սրուն փառքն ապագայն պի-  
տի գնահատէ : Իսկ նեցուկն պիտի լինի արդի  
հայրութիւնն : որուն ջերմագէտ հրաւեր կը կար-  
գամք առատասիրտ արովք մանակցիլ հայրեն-  
եաց սոյն կենսական խնդրոյն իրացուցման :

Միացեալ ընկերութեան հետեւեալ Հիմնական  
կանոնագիրն կարգալէ զինի յուսամք թէ ընթեր-  
ցողք մեծ հաճութեամբ պիտի կարգան նաև  
նոյն ընկերութեան շնորհքէ յորինուած կայանի  
գեղարարութեան Ա և Բ տեսարակաց հրատարակու-  
թիւնն : Կը յուսամք նաև թէ յիշեալ ընտիր  
գործն ազգասէր գնողաց միջոցաւ ընդ փոխ  
սպառելով երկրորդ սպառութե պէտք լինի :

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ  
ՄԻՍՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ԱՅՈՑ  
(Արարողն, Գործադիրն Արեւելեան և Կիլիկիան)  
Ի 1 Յունիս 1880  
ՆՊԱՏԱԿ—Հայաստանի եւ Կիլիկիոյ մեզ  
կրթութիւն ծառայի :  
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
Յօդոսէ Ա. Տնօրէն Ժողովոյ հաւանութեամբ

ընկեր կընդունուի ամեն Հայ երկու սեռէ, որ  
կըրտաքանքի անդամակցիլ և կ'ընդունի հարատա-  
կիլ ընկերութեան օրինաց :

Յօդ. Բ. Անձնիւր ընկեր պարտի ամենական մէկ  
բաժնոյ համար վճարել մէկ գահեկան արծաթ :

Յօդ. Գ. Ընտրող և ընտրելի լինելու համար Կ.  
Պօլսոյ մէջ ընկեր մը պէտք է վճարէ առնուազն  
10 բաժին, Չլ տարին իրացուցած լինի և նա-  
խորդ երեք ամսոց տուրք վճարած :

Յօդ. Դ. Ընկերութեան պատույն անդամ կրնան  
ընտրուիլ նոքա որք բարոյական կարևոր ծա-  
ռայութիւն մը կը մատուցանեն նմա, և կամ մի  
անգամ ընդ միշտ կընտրուին առնուազն 1200 ֆր:  
Յօդ. Ե. Ընկերութեան լիցիտակց անգամ  
կրնան ընտրուիլ նոքա որք գործաւոր անշատու-  
թեամբ կարևոր ծառայութիւններ կը մատու-  
ցանեն նմա :

Յօդ. Զ. Ընկերութեան բարերար կ'արձանա-  
գրուին նոքա որք գէթ 10,000 ֆր. կընտրուին  
կամ կը կտանկեն :

Յօդ. Է. Ընկերութիւնը ճիւղ կը հաստատէ այն  
ամեն տեղ ուր որ հարկ տեղնէ :

ՎԱՐՁՈՒԱԽԻՆ  
Յօդ. Ը. Ընկերութիւնը պաշտօնական ջ մար-  
մին ունի, կեդրոնական ժողովոյ և Տնօրէն Ժող:  
ԿԵՂՈՒՆԱԿԱՆ ԺԱՂՈՎ  
Յօդ. Թ. Կեդրոնական ժողովը կընտրուի յայնչ  
զընկերութիւնը որոյ օրէնսդիր և համարաու-  
բարձրագոյն մարմինն է :

Յօդ. Ժ. Կեդրոնական ժողովը կը բաղկանայ 72  
երեսփոխաններէ, և եթէ ժողովն հարկ համարի  
սոյն թիւն մինչև 80 կընայ բարձրանալ, ընտ-  
րութիւններն ժողովն ինքն կատարելով :

Յօդ. ԺԱ. Կեդրոնական ժողովոյ անդամոց 1/4  
երկու տարին միանգամ վիճակաւ կը շարժի :  
Գաղարկոց տեղ ընտրութիւնը կը լինի կեդրո-  
նական ժողովոյ կողմնէ ներկայացուած եռա-  
պատիկ սրբաբերի ցանկի մէջէն :

Յօդ. ԺԲ. Բացի վիճակաւ դադարեաներէ,  
ն և է պատճառաւ պակած կամ հրատարակ  
երեսփոխաններու տեղ նոր ընտրութիւնը կեդ-  
րոնական ժողովն ինքն կ'ընէ :

Յօդ. ԺԳ. Երեսփոխանք անհասնաբար կամ հա-  
ւաքաբար իրաւունք չունին կեդրոնական ժո-  
ղովոյ նիստերէն դուրս, ժողովոյ առած որոշ-  
մանց դէմ բողոքել և ընկերութեան ընչից նը-  
կատմամբ ո և է ձեռնարկ մ'ընել, նոյնպէս ոչ-  
երեսփոխան ընկերք, որք սակայն կրնան դրա-  
ւոր անաշարիւթիւն կամ գիտողութիւն ներ-

կայացնել կեդրոնական ժողովոյ, նորա Մայր  
գիւանի միջոցաւ :

Յօդ. ԺԴ. Կեդրոնական ժողովն իրաւունք ու-  
նի հրատարակել իւր այն երեսփոխաններն որք  
ընկերութեան շահուց և օրինաց հակառակ  
գործելու գրից մէջ կը գտնուին :

Յօդ. ԺԵ. Կեդրոնական ժողովը կը գումարի ի  
Կ. Պօլսոյ ամեն տարի Մարտ և Մեպտ. ամսոց ա-  
ռաջին կիրակիներն և իւր նիստերը կը շարունա-  
կէ մինչ ցարառումն օրակարգի :

Յօդ. ԺԶ. Կեդրոնական ժողովն արտաքոյ կար-  
գի նիստ կ'ընէ կամ Մայր-գիւանի որոշմամբ,  
կամ Տնօրէն Ժողովոյ և կամ 10 երեսփոխանաց  
անաշարիւթեամբ :

Յօդ. ԺԷ. Կեդրոնական ժողովը կ'ընտրէ իւր  
մայր գիւանը բողոքեալ մի նախագահ և մի  
գեր-նախագահ, մի Ատենագրէ և մի գեր-  
Ատենագրէ :

Յօդ. ԺԸ. Մայր գիւանի և միւս գիւանաց ան-  
դամք Տնօրէն Ժողովոյ չեն կրնար անդամակցիլ :

Յօդ. ԺԹ. Մայր գիւանը և միւս գիւաններն  
երկու տարի պաշտօն կը վարեն և վերնտրելի են :

ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎ  
Յօդ. Ի. Ընկերութեան գործոց վարչութիւնը  
յանձնուած է Տնօրէն Ժողովոյ մը 7 անդամներէ  
բաղկացեալ, որոց թիւը մինչև 9 ի կրնայ բար-  
ձրանալ :

Յօդ. ԻԱ. Տնօրէն Ժողովոյ անձնիւր անգամ  
պատասխանատու է թէ առ Տնօրէն Ժողովն և  
թէ առ կեդրոնական ժողովն : Տնօրէն Ժողովը  
հաւաքաբար պատասխանատու է առ կեդրո-  
նական ժողովն :

Յօդ. ԻԲ. Կեդրոնական ժողովը ներկայից 5/4  
ին քուէովը կ'ընտրէ Տնօրէն Ժողովոյ Ատենա-  
պետ մը : ընտրեալ Ատենապետը կ'առնու իրեն  
պաշտօնակից 6 է մինչև ութն անձ, երեսփոխան  
կամ ոչ-երեսփոխան ընկերներէ, որք ընտրող  
կամ ընտրելի լինելու հանգամանք ունին, ո-  
րոնցմով կը կազմէ Տնօրէն Ժողովն, և որոյ ա-  
նուններն և պաշտօնները կը հաղորդէ կեդրո-  
նական ժողովոյ առ ի գիտութիւնն :

Յօդ. ԻԳ. Ատենապետը անձնիւր անդամի պաշ-  
տօն կը յանձնէ, և զանոնք հրատարակելու ի-  
րաւունք չունի առանց Տնօրէն Ժողովոյ հաւա-  
նութեան :

Յօդ. ԻԴ. Տնօրէն Ժողովը կը պարտաւորէ ընկե-  
րութեան տարեկան երկուացոյցը և կը գործադրէ  
կեդրոնական ժողովոյ վաւերացմանէն յետոյ  
նոյնպէս Տնօրէն Ժողովը կը պարտաւորէ Ուսում

ԺԸ.

Պրպարտութիւն, ցասումն եւ պատիժ

Աւանդ, ինչպէս են յեղեղուկ մարդոց ձևաներն, բարք և խոստմունք  
Չարմանայի փոփոխութիւնն մի կերակար ի մէջ հողուոյն  
Քաղաւորին, որ կ'սկսէր խոժոռ նայիլ առ իւր սուրբ մէր :  
Գարուհիին վերայ նախկին իւր մեծ գործոյն : ու սրնագին  
Քանդակաւորն առ շինք չէր, սէրն հովանալ թախտած էր :  
Կարծես իւր հին դժնուութիւն ապականած էր սիրտն համբուն :  
Իշխանուհւոյն ամեն շարժմանց մէջ կը տեսնէր ինքն և կանկաւծ,  
Անոր վեհ բարքն ու սէրն անդին հարուած կուտար իւր դեղ սրտին,  
Այս ուրիշ բան չէր բայց միայն խեղճ իշխանին դիւրահաւան  
Մէկ որդայթ թաւարամած շատ խորամանկ ձեռքով լարուած :  
Իրաւոյնց միտքն երեւուն կը հաւատայ լրնաններուն :  
Սև քոչ իւր մեծ բաղդին վերայ ձգել կ'ընտրէ ու կը ստիպայ :  
Կուզէ փորձել սէրն աննրկուն, Գարուհիին ճշմարտութիւնն :  
Միշտ հետամուտ և իշխող, ամեն բանի բըծախնդիր  
Ոգւով կ'իջեայ անոր ետև ու ամեն բան կը տեսնէ սև :  
Ներհակակիր շարժմանքներով տաղտուկ կուտայ ու մեծ վրդով :  
Սպանալիք անոր վրայ անդրժարար զուր կը տեղայ :  
Վերջապէս ինչ որ կարող է դրտել ճշդութեւ կեղծիքէ  
Կընէ բողոքն ու վերջին ճիգ իւր կը թափէ ի հարսն հեղիկ :  
ՍԱԼ բաւական է, կըսէր նա, որչափ ատեն որ քուն եղայ :  
Թէ իւր բարոյքն առաքինի անկեղծ են այս անտանելի  
Վարմունքս զանի յոյժ աւելի կ'ամրացնեն անդրդուելիս :  
Իւր արքունեաց մէջ ամրափակ խաւարարքել ի մի խցեակ  
Կը բանտարկէ զիշխանուհին հաճոյքներէ զուրկ բընաւին,  
Եւ գիտելով թէ դարձարանք շըքեղութիւն և փառք համակ  
Կանանց սեռին ամենամեծ բաղձն ու հրապոյրն է սիրայեղճ,  
Խուժողութ կերպիւր մի անորմէ բողոք զարդերն կը պահանջէ :  
Գոհարեղէնք, ախուք, ոսկի, մարգարիտներ և մատանի,  
Չորոնք ի ցոյց իւր ջերմ սիրոյն անոր տուած էր կանխադոյն :

ԺԹ.

Համակամութիւն, եւ իմաստուն մտքարարութիւն

Բայց Գարուհւոյն անկեղծ ողին, որ հըլութիւնն ամենախն  
Կան զամենայն հաճոյք ի վեր նախամեծար կը համարէր :  
Առանց սրտի յոյժ կը լու և անտրտուն չէր և հըլու,  
Բողոք դարձերն իր վրայէն հանեց առաւ անոր անդրէն :  
Էւ աննեղով որ հաճութիւն կ'ըզայ արքայն ետ առնելուն  
Այն զարդերու ծրարն ամեն, Գարուհիի սիրտն ալ անդէն  
Ուրախացաւ զանոնք տալուն պարզ և առած օրուան հանդոյն :  
Կ'ըսէր ինքնին, այս վարմունքով փորձել կ'ուզէ զիս յիմ գործով :  
Իմ ամուսինն կը փափաքի տեսնել երբէք թէ կը զբոլի  
Սէր և շնորհք ամուսնական զոր ունենալ պարտիմ վրան :  
Վասն այնորիկ այսպէս խոտիւ կ'ուզէ ուղղել բարքս լըլիւ :  
Չի քաղցր հանգիստն երկայնատե կ'ընէ ըզմարդ թոյլ ու դերկ :  
Եւ թէ այս չէ իր նըպատակ, գոնէ ըստոյդ ունիմ հաւատք :  
Չի Անտուծոյ սուրբ կամքն է այս որ զանարժան զիս իւր ծառայս  
Կ'ուզէ կը թելի զոճ կըրից, ամրապնդել հաւատս անբիծ  
Այս վիշտերու երկայնատե գըծոխըմբեր լուծին ներքև :  
Քանի՜ քանի՜ դժբաղդներ կան երկրիս վերայ թափառական,  
Որոնք իրենց կամաց դարով ետևն ինկած սուտ յոյսերով  
Հանդարտմէ կ'ընտանգներու մերձ կը գտնուին իբր աչացու :  
Մինչ անհար հոգորն Աստուած, կարծես զանոնք անտես ըրած  
Իր յամրաքայլ Արդարութեան անքննելի և սրբազան  
Անդարձ վճարեց համեմատ թոյլ է տուած երթալ անգամ  
Ո՛հ, գահավէժ եղերք մահու ունկից զերծել չէ կար մարդու :  
Բայց ոչ այնպէս նա վարուեցաւ ինձ աղախնոյս հետ ոչ բընաւ,  
Ա՛յլ գերագոյն իր գըթութեան խա ի ցոյց տալ յատուկ նըշան,  
Չիս միայնակ ընտրեց իբրև սիրուն զաւակ, ո՛ր, ինչ պարզ և,  
Ու հայրական անմահ գըթով ուղղել հողիս յիւր սուրբ գորով

(Պիտի շարունակութիւն)

նական յայտարարեց որոյ ընդհանուր սկզբունքները կեդրոնական ժողովոյ վաւերացման ենթարկելէ յետոյ կը դորձադրէ :

Յօդ. ԻԵ. Տնօրէն ժողովը հասցոյթի նոր անդրիւրի մը գիտելէ կամ Պիւճէէն դուրս ծախք մը ընելէ յանաջ, կեդրոնական ժողովոյ հաւանութիւնը պարտի առնուելու բայց ստիպողական պահանջներու մէջ կրնայ ազատութեամբ դորձել պատասխանատուութիւնը իւր վրայ առնելով :

Յօդ. ԻԶ. Տնօրէն ժողովը երեք տարի պահանջները կը վարէ և անդամներն վերընտրելի են :

ԳԻՒԱՆՔ ԵՒ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Յօդ. ԻԷ. կեդրոնական ժողովը ունի նաև չորս գիւղական, իւրաքանչիւր 5 անդամէ բաղկացեալ : 1. կրթական, 2. Երևանական, 3. Օրէնսդրական, 4. Նախաքննիչ, սոյն գիւղականները կը քննեն իրենց յանձնուած խնդիրներն և կը քննարկուին առ կեդրոնական ժողովը :

Յօդ. ԻԸ. Ամեն տարեկան չորսնի վերջ կեդրոնական ժողովը 3 անդամներէ յանձնատնօրէն մը կ'ընտրէ, Տնօրէն ժողովոյ հայրեններն և սնուատուկին վիճակը, ինչպէս նաև քուէարկեալ էլ մտայնոյցին ճշդութիւնը որո՞՞ւր լինե՞լ քննելու համար :

ԳԱՆՁԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Յօդ. ԻԹ. Տնօրէն ժողովը ընկերութիւն դրամն ապահով ամեն մէջ պարտի գեղեցիկ շահեցումն :

Յօդ. Լ. Երբ իւր քովը հաւաքած դրամը 20 տակնի հասնի, ընկերութեան Գանձապահար պարտաւոր է յանձնել զայն դրամապահին :

Յօդ. ԼԱ. Գանձապահար մինչև 100 տակնի օսմանեան իւր քով կը պահէ առ ձեռն դորձածութեանց համար, հաւաքեալ դրամը դրամապահին յանձնելէ յառաջ ընկերութեան ծախուց համար դորձածել ներքի չէ :

Յօդ. ԼԲ. Դրամապահին առնուելէ դրամոց մասին կեդրոնական ժողովը Նախագահին, Տնօրէն ժողովը Առնուողներն և Գանձապահար միարան ստորագրութիւնը կարեւոր են :

Յօդ. ԼԳ. Ընկերութեան դրամական հասցոյթէն առ նուազն 20 0/0 պահեստ կը մնայ :

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՈՒԹԻՒՆ

Յօդ. ԼԴ. Ներքին կանոնագիր մը զոր կը ըմբարդէ կեդրոնական ժողովը, կը գծէ բոլոր այն նորադրութիւններն որք վերաբերութիւն ունին յիշեալ յօդուածներուն դորձագրութեան եղանակին, և որք հիմնական կանոնագրի պէս անհրաժեշտ դորձագրութեան զօրութիւն ունին :

ՎԵՐԱԿՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՈՒՎՈՒՄՆ

Յօդ. ԼԵ. Եթէ ընկերութիւնը լուծուի, Հայոց ազգային երեսփոխանական ժողովը իրաւունք ունի տեր լինել նորա բոլոր ստացուածոց զորս կը յատկացնէ Հայաստանի և Կիլիկիոյ Հայ մանկուոյն կը թողնէ առանց կրօնական խարուժութեան :

Յօդ. ԼԶ. Սոյն կանոնագիրը վերաքննելի է թիւ աւանդէս 3 տարի վերջը, սակայն ստիպողական պարագայից մէջ Տնօրէն ժողովը և կամ 20 երեսփոխանք կրնան բարեփոխութիւններ առաջարկել կեդրոնական ժողովոյ :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՄԻԱՅՆԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՅ ՀԱՅՈՅ

Գեղազրութիւն Հայկական, դրութիւն

Յովհէփ Վասիլեանի ուր փերարի մեջ ամբարանած. Հեղինակին բողոքական աշխատութեամբ, մեծ խընամբով և մաքուր վիճակով եւս պատրաստուած սոյն գեղազրութեան տեսարաններու Ա. և Բ. արդէն հրատարակելու և միւսներն ալ մամուլ տակ են :

Այս տեսակ օգտակար գործ մը որ իր տեսակին մէջ առաջին անգամ ըստ կրտսեան ազգային հաստատութեան մը ձեռքով, թէ՛ գերբնայց եղանակաւ, թէ՛ գերբնու վայելչութեամբ և թէ՛ գնոյն ածանութեամբ արժանի է որ մուտ գտնէ ամեն ազգային վարժարանաց մէջ : Իւրարանջիւր տետրը կը բաղկանայ 24 էջ և իւր մէջ կը պարունակէ գեղազրական ծանօթութիւններ և հրահանգներ ի պէտս ուսուցչաց :

Հատին գինն է 30 փարայ արծաթ դրոյնաց և 400 է աւելի առնողներու համար մանաւոր գեղջ կը լուրի : Այլգրանատուկին է Միայեալ ընկերութեան գրասեն

եակը Կ. Պոլիս, Ղարաթա, Կեօջէ օղու խան թիւ 13 : Հայոց Միացեալ ընկերութեանց կնիքը չկրող օրինակները անփութ են :

Մեր պատուական հայրենակից Մեծ. Պ. Գ. Յ. Բարազեան, որ իր կենաց մեծ մասը Եւրոպայ անցուցած է, և մերթ ընդ մերթ իր հայրենիքն Չմիւսնիա կ'այցելէր, և որոյ վերջին անգամ ըրած այցելութեան առթիւ տարիի մը մօտ ժամանակ զինքն այն անգամ կրկին Եւրոպայ վերադառնալու համար անցելու երկուշաբթի ընկերութեամբ իւր աղնուախայլ Տիկնոյ խտանական շոգենաւով փառաքէս մեկնեցաւ ի Պոլիս, ուր մտադիր է 15 օրի չափ մնալ. և յետոյ շարունակել իւր ուղևորութիւնն Իտալիա, Գերմանիա, Գաղղիա և վերջապէս յԱնգլիա հաստատել իւր բնակութիւնն : Մեծ. Պ. Գ. Յ. Բարազեանի ուսումնական տաղանդն, աղբարակական ճշմարիտ զգայմունքն, քաղաքավարական չքնաղ վարմունքն կատարելագոյն սիրելի հանդիսացուցած են զինքն ոչ միայն իւր հայրենակցաց, այլ նաև բոլոր այն օտարազգի երևելի անձանց որք նորա ծանօթութիւնն կը վայելեն :

Մ Ս Հ Ս Գ Ո Յ Ժ

Կ. Պոլսոյ անգլային թերթերն կը գուժեն թէ Տիկնոյ Նէվիլ Տուր Պ. խորասանձեան վերջին օրերս իւր մահկանացուն կնքած է ի հասակի 60 ամաց : Տիկնոյ Նէվիլ Տուր իւր առաքինազարդ բաղձադիմի շնորհքն Հայ իգական սեռին փառքն ու պարծանքն եղած էր, մանաւանդ նոցա օրինակ և տխար առաքինութեան խմբագրութիւնս իսկ հանդիսեցելոյն սիրելի զաւակաց հեռուցակից սրտիւ կ'ողբայ սոյն մեծ կորուստին վրայ, և երկնային սուրբ մեծարութիւն կը մաղթէ բոլոր սիրելեաց և ազգականաց նորին որոց ինչպէս նաև ամեն ճշմարիտ Հայոց սրտին մէջ կենդանի կը մնան հանդուցելոյն պատուական բարեմասնութեան յիշատակներն, որոց յայտարար արդիւնքն են իւր սիրելի զաւակաց կատարեալ դաստիարակութիւնն :

Տ Ե Պ Ա Ա Ա Կ Ա Ի Ք Ի Ք

Տարիի մը չափ է որ մեր թաղապետութեան Ա. շրջանակն քաղաքին կազմ լուսաւորութեան ընկերութեան հետ չ'ընկալուի համաձայնել, սոյն շրջանակի պատկանեալ թաղերու կազմ լուսաւորներն վերցուած և անոնց տեղ բէթըրի լուսաւորներ, և այն ոչ գոհացուցիչ կերպիւ կը վերլուցին, և որոյ նսեմութեան շնորհիւ առաջակութիւնը գրեթէ ամեն գիշեր անպակաս կը դորձուէին :

Մեծ ուրախութեամբ կ'իմանամք այժմ որ մեր ընդհանուր կառավարիչ Ն. Վսեմութիւն բարձր. Միահատ Քաշայի շնորհիւ յիշեալ անհամաձայնութիւնն վերցուելով, ընկերութիւնն հինգ տարուան համար հաստատուած օրինակ որ պայմաններու ներքե վերստին պիտի սկսի իւր կազմ լուսաւորներով լուսաւորել մեր փողոցներն, միանգամայն և լուսաւորաց թիւը 1000ի բարձրացնելով, ընկերութիւնն սոյն թիւը իսկ անցնել յօժարափոյթ է՝ եթէ մեր երկու թաղապետութեանց հասցոյթն ներքն :

Համայն հաստատութիւնն իւր մեծ և խորին շնորհակալութիւնն կը յայտնէ մեր բարձր. կուսակալին սոյն կարեւոր տնօրէնութեան համար, որ նորին Վսեմութեան վարչական վերաջնող մեծ տաղանդի բազմաթիւ արդիւնքներուն կարգը կը գաւառի :

Այսչափ երկաթուղոյն գլխաւոր Տեսուչներէն մին սըր Ալէքանդր Պորթուիք անցեալ շաբթու քաղաքս ժամանելով ընկերութեամբ բարձրագոյնաւ կուսակալին և յիշեալ երկաթուղոյ գլխաւոր պաշտօնէտայ Պ. Բուրաշերի Այտընի և Սարայքեյի միջավայր կողմանքն, և նոր շինուելիք գծին երկու ծայրերու տեղուանքն տեսնելու գնացին :

Ճաւայի է քսել որ կուսավարութեան կողմէ ի դորձ գրուած հակողութեանց և ջանից հակառակ քաղաքիս և շրջակայից մէջ ատենատեն

աւագութեանը և սպանութիւնը անպակաս են : Աւելի անգու մի սոցներ և առաւել հսկողութիւնը հարկաւ կարող պիտի լինին այսպիսի եղանակներով եւս առաջ առնուել : Սրգէն կ'իմանամք որ Նարը քէոյի եղանակագործութեան մասին, զոր մեր նախընթաց թերթով մանրամասն եկարագրած էինք, մի քանի կասկածելի սեմինք, որ գիւղի բնակաց գասուն կը վերաբերին, ձեռք անցնելով ծանր հարցափորձի ներքե գրուած են :

Երկրաշարժի ցնցումներն բոլորովն դարձած չըլլալով, երբեմն թեթեւ երբեմն բաւական զօրաւոր կերպիւ կը շարունակուին : Յուլիս 17ին առաջին սաստիկ զեռանալարէն, որ քաղաքին պատմական հնախօսութեանց համեմատ դարէ ի դար շարունակական շրջան մի ունենալ կ'երեւի, և ամեն մէկ դար գործած մեծամեծ աւերումներն մեզ յիշել կուտայ, այժ անգամ ևս ըրած մարդկային զոհերէ զայն չենք բրուտեղ տեղ ահագին աւերումներ տեղ տեղ նուառուածքներ և այլն դորձեց :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԱՅԻՕԿ : Պնդեալ եթնութի մէջ 95 կողով տաճարներու երան ի գին 230—240 դրուչի չէքին, ըստ տեսակին իսկ վերջին եթնութիւնն մէջ եղած վաճառմունքն են 16 կողով talequale, ի գին 202—220 դրուչի չէքին :

ԲԱՂԱՄՈՒՏ : Բանուած և չբանուած ապրանք 9000 կենդինարի վաճառմունք եղին 53—114 դրուչ կենդինարն ըստ տեսակին :

ԲՈՒՐԳ : Վաճառմունք եղին 350 կենդինար ի գին 320—400 ըստ արժանեաց :

ԹՈՒՂԱՂ : Գինքն ամեն տարուանէ անսովոր կերպիւ բարձր են ի քաղաքս նուազութեան հնձոց : Վերջին անձրևներն ևս առաւել զնուառ անխիթ եղան :

ԵՆՆՈՒՅՈՒՄ

ԴԵՂԱՐԱՆ ԵՍՒՆՅ ՅԱՄԱՊԱՅԻ

Իզմիր Պատմախանէ փողոց երկաթուղի կայարանին գիւմար թիւ 17 :

Ներկայիս կը յայտարարեմ արգոյ հասարակութեան քե Անգղիական եւ Բարիքի ամեն կերպ նոր եւ ընտիր տեսակներէ մարտը վեղեր բերել տուած եմ : Պետք ունեցողներն կարող են ստանալ խիստ արժան գիներով : Նաեւ Գեղարանիս մեջ բոլորական այցելութիւնը կը յառ ամեն պետք ունեցող անձերու : Գեղարան յանախոյ բոլորներն են պարտաւոր թագար վարդան, Մ. Խրիստոսեանի Նաբի, Մ. Նիքոլայի եւ Ա. Վրանիտի : Երաջայից համար կարեւոր յոյժածներն կը գտնուի Չ. Ինգերիի քանդակեալ կար, lait condensé, եւ գտնուած մարտը արժանակ Չկան իւղ huile de soie de Morue : Ստացող փորձով պիտի իմանան դեղերու լաւութիւնն եւ մեծապէս գն պիտի լինին : ԵՍՒՆՅ ՅԱՄԱՊԱՅԻ

Պարոն Ալլիմուրա գիտութեանց և դպրութեանց գիւղերովի դպրոց մի բացած է ի Պիւճա, ուր արտաքին աշակերտներ ևս պիտի ընդունի : Բնասանելի հայրերը կը հրաւիրուին յիշեալ հաստատութիւնն օգուտ քաղելով իրենց զաւակները իր կին վստահութեամբ, հաստատ ըլլալով թէ այսպիսի արժանաւոր Տեսուչի մը խնամայ ներքե խիստ ընտիր դաստիարակութիւն մը ստանան :

English Commercial School

Արձակուրդի օրերուն լրանալէն զկնի սոյն դպրոցն կրկին պիտի բացուի անանջիկայ Սեպտեմբեր ամսոյ 8—20ին :

Ուսուցիչ պաշտօնէտայք 14 անձինք են, որոցմէ 3ը Անգլիերէն լեզուի ուսուցիչք են և ներքին Սոյն առաւելութիւնն հարկաւ մեծապէս օգուտակար պիտի լինի մեր աշակերտաց Անգլիերէն լեզուի ուսման մէջ զարգանալու :

Վ. Զ. Պէրբըր

ՏԵՐ ԼՐԱԳՐՈՅ

Պ. Ռ. Կ. Պալատարեան